ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ՈՐՈՇՈՒՄ

2011 թվականի N ___ -Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻ ՇԱՐՔ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է**.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի «Ընտանիքների անապահովության գնահատման և ընտանիքների անապահովության գնահատման համակարգի տեղեկատվական բազայում ամրագրված անհատական տվյալների պաշտպանության, փոփոխությունների կատարման և Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ու սոցիալական ծառայությունների տարածքային գործակալությունների միջև անհատական տվյալների փոխանակման կարգերը հաստատելու մասին» N 2317-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

1) որոշման N 1 հավելվածի

ա. 3-րդ կետից հետո լրացնել նոր 3.1 կետ հետևյալ բովանդակությամբ.

«3.1 Ընտանիքի կազմը և փաստացի բնակության հասցեն որոշվում է գործակալության, տեղական ինքնակառավարման մարմնի և սոցիալական աջակցության խորհրդի մեկական ներկայացուցիչներից կազմված խմբի տնային այցելությամբ. եթե՝

ա) սույն կարգի 3-րդ կետով սահմանված տեղեկանքում դիմողի ընտանիքի բնակության հասցեն նշված է երկրաշարժի հետևանքով քանդված շինության հասցեն.

բ) դիմողը ներառված է պետական աջակցությամբ իրականացվող բնակարանային ապահովման ծրագրում՝ ոչ իր փաստացի բնակության հասցեով:

Ուսումնասիրության արձանագրությունը ստորագրվում է տնային այցելությանը մասնակից բոլոր պաշտոնատար անձանց կողմից:»:

բ. 4-րդ կետից հետո լրացնել նոր 4.1 կետ հետևյալ բովանդակությամբ.

«4. Սույն կարգի 3.1-րդ և 4-րդ կետերով սահմանված կարգով առանձին ընտանիք ճանաչված դիմողի սոցիալական անձնագրում և տեղեկատվական բազայում լրացվում են միայն դիմողի ընտանիքի անդամների տվյալները:»:

2) որոշման N 4 հավելվածի 1-ին կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությունով. «Ընդ որում, քաղաքային բնակավայրերի բազմաբնակարան շենքերում